# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

## ՀՐԱՄԱՆ № 82

«10» 11 2021 թ. ք. Երևան

### ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Կարեն Ալբերտի Բիշարյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և նրա պարտականությունների կատարումը նույն վարչության պետի տեղակալ Աբգար Սարգսի Առաքելյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 05.11.2021թ. N 405-Ա և 08.11.2021թ. N 406-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Կ.Բիշարյանի կողմից՝ ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Առաքելյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Աֆանդյան Արմեն - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Սարգսյան Վարդգես - | ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ |

| | |
|---|---|
| Մարտիրոսյան Հայկ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Քոչարյան Նարինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետ |
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Շաքե Հովհաննիսյան - | ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի պետի պաշտոնակատար: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**